Լևոն Միրիջանյանի անվան հ.155 հիմնական դպրոց

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ներառական կրթության իրականացման առանձնահատկությունները և առկա դժվարությունները

Ղեկավար՝ Թամարա Միրզոյան

Ուսուցիչ՝ Մարիամ Մաթևոսյան

Երևան- 2023

Բովանդակություն

Ներածություն……3

Գլուխ 1

Ներառական կրթություն ……5

Գլուխ 2

Ներառական կրթության իրականացման առանձնահատկությունները……...…8

Գլուխ 3

Ներառական կրթության մարտահրավերները դպրոցում……12

Եզրակացություն……18

Օգտագործված գրականության ցանկ ……..……20

Ներածություն

Այս հետազոտական աշխատանքի արդիականությունը կայանում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունում գնալով շատանում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների թիվը և անընդհատ փոխվում է մեր հասարակության վերաբերմունքը նրանց հանդեպ: Մինչև 2025 թվականը նախատեսվում է, որ Հայաստանը պետք է անցնի համընդհանուր ներառական կրթության:

Կրթության մատչելիությունն ու հասանելիությունը, որպես հասարակության զարգացման ու առաջընթացի հիմնական միջոց, ամրագրվել են դեռևս 1990- ականներին, երբ ՄԱԿ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ երկրների կողմից ընդունվեցին «Երեխաների իրավունքների կոնվենցիան» և «Կրթությունը բոլորի համար համաշխարհային հռչակագիրը»: 1994թ. աշխարհի 92 երկրների կառավարությունների ու 15 միջազգային կազմակերպությունների կողմից ստորագրված «Սալամանկայի հռչակագիրը» սահմանեց, որ յուրաքանչյուր երեխա ունի կրթական առանձնահատկություններ և կրթության հիմնարար իրավունք: Համաձայն այս հռչակագրի, կրթական ծրագրերը պետք է մշակվեն և իրականացվեն՝ հաշվի առնելով այդ առանձնահատկությունները: Ներառական կրթության գաղափարը Հայաստանում տեղ գտավ հռչակագրի ստորագրումից 11 տարի անց՝ 2005թ., երբ ընդունվեց համապատասխան օրենքը.<<2005 թ. սեպտեմբերի 1-ին ուժի մեջ մտավ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը: Դրանով պետականորեն ճանաչվեց և ամրագրվեց նաև ներառական կրթությունը Հայաստանում>>:

2014թ. դեկտեմբերի 1–ին փոփոխություն կատարվեց «Հանրակրթության մասին» օրենքում և ուժը կորցրած ճանաչվեց «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը:Այդ փոփոխությամբ ՀՀ-ն հռչակեց ներառական կրթությունը որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունք: Օրենքի նոր փոփոխությունը ենթադրում է ներառական կրթությանն աջակցող եռաստիճան՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների ներդրում, դպրոցի, մարզի և հանրապետության մակարդակներում: Օրենքի փոփոխությամբ երեխայի անհատական ուսուցման պլանը սահմանվում է որպես իրավական փաստաթուղթ՝ հիմնված հանրակրթության պետական չափորոշիչների, ծրագրերի և երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի արդյունքների վրա:

Ըստ միջազգային գործակալությունների գնահատականների՝ մեզ հայտնի է հետևյալը.

- զարգացող երկրներում հաշմանդամ երեխաների 98%-ը դպրոց չի հաճախում:
- զինված ընդհարումների ժամանակ, ամենաքիչը երեք երեխա վիրավորվում և հաշմանդամ է դառնում: Յուրաքանչյուր տարի ականներից զոհված ու վիրավորված 26 000 մարդկանցից 40%-ը երեխաներ են: Ավելի քան 10 միլիոն երեխա հոգեբանական տրավմայի է ենթարկվում զինված հակամարտությունների պատճառով:
- յուրաքանչյուր տարի 41 միլիոն երեխա ծնվում է մտավոր անբավարար զարգացման ռիսկով
- երեխաների շահագործումը, ինչպես օրինակ մարմնական պատիժները, անդամահատումը, ազատազրկումը, պատճառ են դառնում մանկական հաշմանդամության, հոգեկան հիվանդությունների, ֆիզիկական ու հոգեբանական հաշմանդության, դպրոցում կամ աշխատանքում դժվարությունների և այլն

Հասարակության մեջ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նկատմամբ կանխակալ վերաբերմունքը բավական ամուր է արմատավորված: Պատճառներն են՝ տեղեկատվության և հատուկ կարիքներով մարդկանց մասին ունեցած գիտելիքների, նրանց հարևանությամբ ապրելու փորձի բացակայությունը կամ պակասը: Եթե հատուկ կարիքներով երեխաները ևս հաճախեն նույն դպրոցը, ինչ որ մնացածները, ապա բոլորի մեջ կձևավորվի անկանխակալ վերաբերմունք հատուկ կարիքներով մարդկանց նկատմամբ: Արդյունքում ապագա քաղաքացիների մոտ կարմատավորվի այն գիտակցությունը , որ հատուկ կարիքներով մարդիկ ևս հասարակության լիիրավ անդամներ են:

Սովորելով հանրակրթական դպրոցում՝ հատուկ կարիքներով երեխաներն իրենց ուրիշներից տարբեր չեն զգում: Դպրոցում հասակակիցների հետ շփումը կարող է հատուկ կարիքներով երեխաներին դարձնել ավելի ինքնուրույն, նպաստել սոցիալական ու պրակտիկ հմտություններ յուրացնելուն:

Հետազոտական աշխատանքի նպատակն է վեր հանել ներառական կրթության առավելություններն ու թերությունները և փորձել առաջարկել տարբեր ուղիներ այդ թերությունները վերացնելու համար:

Գլուխ 1

Ներառական կրթություն

Ներառական կրթությունը սովորողների համար կրթություն ստանալու հիմնական ռազմավարությունն է, որի նպատակն է ձևափոխել կրթական ծրագրերը և վերացնել խոչընդոտները՝ հաշվի առնելով սովորողների անհատական կարիքներն ու պահանջները:

Հայ ժողովուրդը պատմության մեջ հայտնի է խոցելի խմբերի հանդեպ իր ունեցած մարդասիրական մոտեցումներով: Հնում եկեղեցին իր վրա է վերցրել հաշմանդամներին և կարիքավորներին կրթելու, հոգ տանելու և ներառելու մեծ գործը: Սակայն խորհրդային տարիներին պատկերը փոխվեց. բացվեցին հատուկ հաստատություններ, և մարդիկ առանձնացվեցին հասարակությունից: Ընտանիքները տարիներով թաքցնում էին նման երեխաների գոյությունը՝ համարելով այն ամոթալի դժբախտություն: Բարեբախտաբար, այժմ պատկերը բավականին այլ է, և զգալի են դրական տեղաշարժերը հասարակության ընկալման և վերաբերմունքի մեջ: Հայաստանի կառավարությունը ևս դրական քայլեր է ձեռնարկել երեխաների կրթության իրավունքն իրացնելու նպատակով: Ըստ 2014 թ-ի ընդունված օրենքի՝ ներառական կրթությունը յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումն է: Կրթության առանձնահատուկ պայմաններն օրենքով սահմանվում են՝ որպես «հանրակրթական հիմնական ծրագրի յուրացմանը նպատակաուղղված առարկայական ծրագրերի և ուսուցման մեթոդների, ուսուցման անհատական տեխնիկական միջոցների, հարմարեցված միջավայրի, ինչպես նաև մանկավարժական, սոցիալական և այլ ծառայությունների ամբողջություն»: Կարևոր է նաև նշել, որ ներառական կրթությունը չի վերաբերում միայն հաշմանդամություն ունեցող երեխաների կրթությանը. այն պետք է օգտակար լինի բոլոր երեխաներին և կենտրոնացած բոլորի կրթական կարիքների վրա՝ բոլոր սովորողների համար ապահովելով որակյալ կրթություն և սոցիալական ներառում:

Ներառական կրթության գաղափարն իր մեջ անպայմանորեն բովանդակում է հանդուրժողականություն և այլ համանման հասկացությունների համախմբություն, որոնց առկայությունը ոչ այնքան ցանկալի, որքան պարտադիր հիմք է, որպեսզի առանձնահատուկ

պայմաններ հասկացությունը անխուսափելիորեն չվերածվի առանձնահատուկ վերաբերմունք հասկացության:

Հատուկ կարիքներով մարդկանց՝ հասարակության մեջ ներգրավելու հիմնախնդիրը ներկայումս Հայաստանի Հանրապետության կողմից վարվող քաղաքականության առաջնահերթություններից է: Հարկ է ընդգծել, որ վերջին տասնամյակներին հատուկ կարիքներով մարդկանց նկատմամբ հասարակական վերաբերմունքի մեջ դրական առումով էական փոփոխություններ են արձանագրվել:Դրա պատճառները մի քանիսն են. նախ 1988թ. ավերիչ երկրաշարժից հետո կտրուկ ավելացավ հատուկ կարիքներով մարդկանց քանակը, և նրանք հասարակության մեջ ներառվելու կարիք ունեին: Ակնհայտ է, որ այդ մարդիկ պետք է հասարակության լիիրավ անդամ լինեն՝ ունենալով հավասար իրավունքներ և, որ շատ կարևոր է, նաև հնարավորինս հավասար պարտականություններ: Բացի այդ, Հայաստանում պետական մակարդակով հատուկ կարիքներով մարդկանց նկատմամբ վարվող քաղաքականությունը տարեցտարի դրական տեղաշարժեր է արձանագրում: Տարեցտարի շատանում են առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող մարդկանց թիվը: Դրա պատճառներից մեկը այն է, որ մեր երկիրը մշտապես գտնվում է պատերազմների մեջ: Այդ հանգամանքով պայմանավորված մեր շրջապատում կան բազմաթիվ հաշմանդամ մարդիկ, երեխաներ: Պատերազմը խաթարել է շատերի հոգեկան աշխարհը, շատերը դարձել են ագրեսիվ, նյարդային, զգացմունքային, դյուրագրգիռ,ֆիզիկապես հաշմանդամ և այլն: Մեր հասարակությունը պետք է կարողանա օգնի այդ մարդկանց ներառվել հասարակության մեջ, այնպես անել , որ նրանք իրենց զգան պետության լիիրավ անդամ, օգտակար և ընդունված:

Տարիքի հետ ԿԱՊԿՈՒ երեխաները սոցիալականացվում են, և այդ գործընթացը հիմնականում ընթանում է ընտանիքում և դպրոցում: Ընտանիքում և դպրոցում առկա վերաբերմունքի և հանդուրողականության ձևերը իրենց հերթին ազդում են երեխաների բարոյական, ֆիզիկական և հոգեբանական առողջության վրա: Երեխաներն ու դեռահասները բնակչության ամենաանպաշտպան օղակն են դառնում:

Ներառական կրթությունն ունի թե՛ իր դրական, և թե՛ բացասական կողմերը: Դրականն այն է, որ հաշմանդամություն ունեցող երեխաներն դեռ փոքր տարիքից ինտեգրվում են հասարակությանը, ադապտացվում պայմաններին: Սակայն պետք է հաշվի առնել, թե արդյոք իրենք իրենց ֆիզիոլոգիական և մտավոր հնարավորություններով կարող են հասնել այն ռիթմին, որն ունեն դասարանի մյուս երեխաները, պետք է շատ նրբորեն աշխատել, որ չտուժի այն մարդն, ով չունի այդ խնդիրները: Պետք է հոգեբանական խմբի շատ լուրջ և փոխհամաձայնեցված աշխատանք տանել: Խիստ կարևոր է մանկավարժի

արհեստավարժությունը, ով բացի ակադեմիական գիտելիքների հսկայական պաշար ունենալուց, նախ և առաջ, պետք է ունենա մանկավարժական և հոգեբանական գիտելիքներ և հմտություններ: Ներառման պայմաններում ուսումնական գործընթացում տեխնոլոգիաների կիրառումը, ժամանակակից դիրքորոշումներից ելնելով, պահանջում է ոչ միայն կրթության բովանդակության և խնդիրների փոփոխություն, մի սերնդից մյուսի սոցիալական փորձի փոխանցում, այլև անձի զարգացման համար առավել բարենպաստ միջավայրի ստեղծում: Ներառական կրթական տեխնոլոգիաների յուրահատկությունը կրթական ընդունված համակարգերի և արտաքին միջավայրի հետ մշտական փոխգործունեության մեջ լինելն է: Դա հնարավորություն է տալիս բազմակողմանիորեն գնահատել յուրաքանչյուր փաստն ու երևույթը, ընդունել այլ մարդկանց աշխարհը, տեսակետը և հայացքները:

Գոյություն ունեն հաշմանդամություն ունեցող անձանց ինքնորոշման ձևավորմանն ուղղված մշակված արդյունավետ մեթոդներ, որոնք կիրառվում են որպես ամբողջական ծրագրեր և ընդգրկված են ԱՄՆ-ի դպրոցներում, տարբեր հաստատությունների գործունեության պլաններում, և այսօր դա տալիս է իր արդյունքները: Վերջիններս տեսանելի են այն հարցերում, որ հենց հաշմանդամություն ունեցող անձինք են այսօր իրենց իրավունքների և բարեփոխումների պահանջատերերը, սեփական իրավունքներից քաջատեղյակ լինելով, դառնում են սեփական շահերի պաշտպան: Ներառական կրթության հիմնական գործընթացը ենթադրում է, որ հանրակրթական դասարանի ուսուցիչը ունի որոշակի գիտելիքներ և պատկերացում տարբեր ունակություններով և կարողություններով սովորողների կարիքների մասին, ծանոթ է կրթական մեթոդներին և ուսումնական պլանների ռազմավարությանը: Այս տեսանկյունից ուսուցիչը կարևորագույն դեր է խաղում կրթության որակի ապահովման հարցում և, միաժամանակ, ուսուցչի որակը ամենից շատ պայմանավորում է սովորողի հաջողությունը, քան որևէ այլ գործոն՝ ներառյալ դասարանի միջավայրային պայմանները: Պարզ է, որ հատուկ կարիքներով երեխաները պետք է կրթություն ստանան հանրակրթական կառույցներում՝ առավելագույնս իրենց ունակություններին և կարողություններին համապատասխան, և չպետք է մեկուսացվեն հատուկ դպրոցում, քանզի կրությունը այնտեղ չի կարող առաջընթաց ապահովել՝ անգամ բոլոր համապատասխան նյութերով, մեթոդներով և ծառայություններով հագեցած լինելու պարագայում: Ներառական դպրոցում հատուկ կարիքներով երեխաների հետ աշխատող ուսուցիչների պատրաստումը և օժանդակումը կարծես թե փոփոխություններ է ապրում: Անքննելի է այն տեսակետը, որ հանրակրթական դպրոցներում նրանց ներգրավվածությունը բերում է ունեցած հնարավորությունների անասելի մեծ առաջընթացի, քան ենթադրվում էր

մի քանի տարի առաջ: Ներկայումս գոյություն ունեցող փաստերը ավելի լավ են հիմնավորում իրավիճակը, օրինակ անհատական ուսումնական պլան /ԱՈՒՊ/ կազմելիս, կրթական այն խնդիրներն ու նպատակները, որ տարեսկզբին դրվում էին մասնագետի առջև, արդեն իսկ տարեկեսին անպայման որոշակի առաջընթաց են ունենում, քանի որ շատ դեպքերում երեխաների առաջընթացը և ցուցաբերած ակտիվությունը առկա կանխատեսումներից ավելին է լինում: Որպես կանոն սա պայմանավորվում է մի քանի գործոններով՝ կրթական, սոցիալական , հոգեբանական : Առաջնային դերերից մեկը սոցիալական համագործակցությանն է, քանի որ սովորելով հանրակրթական միջավայրում՝ ԿԱՊԿՈՒ երեխաները հնարավորություններ են ունենում ներգրավվել ուսումնական տարբեր գործունեություններում, տեսնել և զգալ դասընկերների կարողություններն ու հմտությունները, և կամա թե ակամա ձգտումներ ունենալ: Այս երեխաները հնարավորություն են ունենում իրենց տարեկիցներից և համադասարանցիներից տեսնել, լսել և սովորել ոչ միայն ճանաչողական գիտելիքներ, այլև սոցիալական, հաղորդակցական, վարվեցողության շատ հմտություններ, որոնք կարևոր նշանակություն ունեն առօրյա կյանքում:Ներառական ուսուցումը հատուկ կարիքներով երեխաներին դարձնում է ավելի ինքնուրույն, նպաստում նրանց անձի ձևավորմանը, իմացական և հուզակամային գործընթացների զարգացմանը, սոցիալական հմտությունների յուրացմանը:

Գլուխ 2

Ներառական կրթության իրականացման առանձնահատկությունները

Ներառումը սկսվում է ընտանիքում, շարունակվում դպրոցում և կայանում է հասարակության մեջ: Կրթության իրավունքը վերաբերում է բոլորին: Յուրաքանչյուր ոք պետք է իրավունք ունենա սովորելու հանրակրթական դպրոցում՝ իր կարողություններին ու կարիքներին համապատասխան: Սկզբունքորեն այդ կարիքները պետք է բավարարվեն հանրակրթական դպրոցում և պետք է հստակ ըմբռնել, որ այս իրավունքն ապահովելը դպրոցի և պետության պատասխանատվության տակ է: Դպրոցների շենքերի մատչելիությունը, ինչպես նաև հատուկ նյութերի և սարքավորումների առկայությունը պետք է ապահովված լինեն այնպես, որ խոչընդոտ չհանդիսանան որևէ երեխայի դպրոցում սովորելու համար:

Ներառական կրթության առավելություններից է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը և դաստիարակությունը կազմակերպել առանց երեխային ընտանիքից անջատելու՝ ապահովելով նրա համակողմանի հասարակական զարգացումը և ներառելով նրան հասարակության մեջ: Այն նպաստում է հասարակության բոլոր անդամների հնարավորությունների հավասարեցմանը՝ հաստատելով, նոր հարաբերություններ և ստեղծագործական հնարավորություններ: Ներառական կրթությունը հաջողում է, երբ կա լավ պլանավորում, աջակցություն և նվիրվածություն այն մասնագետների կողմից, ովքեր աշխատում են երեխաների հետ: Ներառված դասարանում մենք սովորում ենք հասկանալ և հարգել բազմազանությունը, լսել միմյանց ամենատարբեր կարծիքները: Ներառական կրթությունը չի կարելի դիտարկել որպես առանձին ոլորտ, այլ պետք է դիտարկել որպես դպրոցական համակարգի զարգացման սկզբունք: Դպրոցը պետք է կարողանա որակյալ կրթական ծառայություններ մատուցել բոլոր երեխաներին՝ անկախ նրանց անհատական կարողություններից: Բոլոր երեխաները պետք է հարգալից վերաբերմունքի արժանանան և ստանան հավասար հնարավորություններ՝ համատեղ սովորելու համար: Երբ կրթությունը ներառական է, ապա դրանից շահում են երեխան, ընտանիքը, պետությունը և հասարակությունը: Այն կրթության կազմակերպման գործընթաց է, որի հիմքում բոլոր երեխաների, այդ թվում նաև՝ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն ստանալու իրավունքն է: Այն արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացնում է նրանց մասնակցությունը ուսումնական, մշակութային և համայնքային կյանքին և նվազեցնում է կրթությունից նրանց դուրս մնալը: Ներառական կրթությունը ենթադրում է կրթական գործընթաց, որն ուղղված է բոլոր սովորողների կարիքներին, ներառյալ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, բռնությունների ենթարկվող երեխաներ, աշխատող երեխաներ, փախստական կամ տեղահանված երեխաներ, միգրանտներ, աղքատ և չքավոր երեխաներ, լեզվական փոքրամասնություններ, ազգային փոքրամասնություններ, հակամարտությունների հետևանքով որբացած երեխաներ և այլն:

Ներառական կրթությունը ենթադրում է համակարգի, այլ ոչ թե երեխայի հարմարեցում: Այս գործունեության դրական արդյունքներից են դասավանդման որակի բարձրացումն ու սովորողների ձեռքբերումները (այդ թվում նաև՝ կրթական գործընթացից դուրս մնացած և ցածր առաջադիմությամբ աշակերտների թվի նվազեցումը): Անկախ այն հանգամանքից, թե որքանով արդյունավետ ուսում է ստանում աշակերտը դպրոցում,

ընտանիքի մասնակցությունը ևս համարվում է անփոխարինելի պայման, եթե մենք ցանկանում ենք ապահովել, որ երեխայի ստացած գիտելիքները կիրառվեն տանը կամ իրական կյանքի այլ իրավիճակներում: Փորձը ցույց է տալիս, որ ընտանիքի անդամները կարող են կարևոր ռեսուրս լինել, եթե պատշաճ կերպով տեղեկացվեն, նախապատրաստվեն, նրանց վստահություն և հավատ ներշնչվի, և ոչ մի ջանք չպետք է խնայել ուղղելու և ուղղորդելու նրանց աջակցությունը երեխայի հետ աշխատանքում: Շատ կարևոր է, որ ուսումնական ծրագրերը լինեն բավարար չափով ճկուն, և ուսուցիչներին տրվի դրանք երեխաների անհատական կարիքներին համապատասխանեցնելու, լուծումներ գտնելու հնարավորություն, որպեսզի յուրաքանչյուր երեխա ստանա իր կարիքներին և կարողություններին համապատասխան կրթություն: Ուսուցումը պետք է խթանի և ոչ թե խոչընդոտի երեխայի զարգացումը: Հանրահայտ ճշմարտություն է, որ մարդիկ տարբեր են, սակայն դա միշտ անտեսվում է ուսումնական ծրագիր կազմելիս, երբ ենթադրվում է, որ բոլոր երեխաները պետք է կարողանան նույն բանը սովորել, նույն գործիքներով ու նույն մեթոդներով: Բոլոր երեխաների, հատկապես հաշմանդամություն ունեցող և օժտված երեխաների համար շատ կարևոր է, որ ուսումնական ծրագիրը հստակ նպատակներ սահմանի նրանց կրթության համար, իսկ ուսուցիչներն ազատ լինեն ընտրելու այն ուղիներն ու մեթոդները, որով նրանք կապահովեն այդ նպատակներին հասնելը:

Ներառական կրթության իրավական հիմքերը.

1. Յուրաքանչյուր երեխա ունի կրթություն ստանալու և ուսումնական հաստատությունն ընտրելու իրավունք:

2. Ներառական կրթություն՝ յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովում:

3. Յուրաքանչյուր երեխա ունի իր ժողովրդի պատմությանը, ավանդություններին, հոգևոր արժեքներին և համաշխարհային մշակույթին հաղորդակցվելու իրավունք:

4.Պետությունը և նրա համապատասխան մարմինները հաշմանդամ, մտավոր կամ ֆիզիկական արատ ունեցող երեխային երաշխավորում են անվճար մասնագիտացված բժշկական, արատաբանական և հոգեբանական օգնություն, իր հնարավորություններին

համապատասխանող բազային և մասնագիտական կրթություն ստանալու, աշխատանքի տեղավորվելու հնարավորություն, սոցիալական վերականգնում, լիարժեք կյանք՝ նպաստելով նրա ինքնավստահության ամրապնդմանը, դյուրացնելով նրա մասնակցությունը հասարակական կյանքին: Նման երեխաները կարող են իրենց ցանկությամբ սովորել հանրակրթական դպրոցներում:

5.Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ հաշմանդամ երեխաներն ունեն հաշմանդամության սայլակների, հատուկ պրոթեզաօրթոպեդիկ կոշիկների ու բոլոր տեսակի պրոթեզային իրերի (բացի թանկարժեք մետաղներից պատրաստվող ատամնապրոթեզներից) և հաշմանդամ երեխաների կենսագործունեության համար անհրաժեշտ տեխնիկական այլ սարքերի (առարկաների) անվճար պատվիրման, նորոգման և ստացման իրավունք՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

Ներառականության դեպքում ունենք ավելի լայն ուսուցման հնարավորություններ և ամենատարբեր մեթոդների որոնման անհրաժեշտություն: Տարբեր ունակություններ ունեցող երեխաների հավասար պայմանների ապահովումը բերում է ուսուցման մեջ մոտիվացիայի բարձրացմանը: Ներառական կրթությունը բոլոր երեխաներին հավասար հնարավորություն է տալիս զարգացնել երևակայությունը և բացահայտել իրենց մեջ նոր տաղանդներ: Ներառական կրթությունը խթանում է հարգանքի և փոխզիջման մշակույթի ձևավորմանը: Այն նաև հնարավորություն է ընձեռում ծանոթանալու անհատների տարբերություններին և ընդունելու այդ տարբերությունները: Ներառական կրթությունը հնարավորություն է տալիս սովորողի մոտ ձևավորել ընկերասիրություն:

Վերը նշված առավելություններից բացի, կարևոր ենք համարում ներկայացնել ներառական կրթության մի քանի դրական կողմ ևս: Շատ կարևոր է հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի դերը ներառական կրթություն իրականացնելու ճանապարհին: Հարկ է նշել, որ կառույցը միշտ պատրաստակամ է աջակցություն ցուցաբերել, իրեն հղվող ցանկացած հարցի և խնդրի դեպքում: ՀՄԿ-ն իր և ենթակայության ներքո գործող ՏՄԱԿ-ները պատրաստակամորեն իրականացնում են խորհրդատվություն և աջակցություն բոլոր դպրոցներին, ուսուցիչներին և աշակերտներին: Բացի հաճախակի կազմակերպվող վերապատրաստումներից ՀՄԿ-ն նաև աջակցություն է ցուցաբերում դպրոցներին մենթորների միջոցով: Միշտ պատրաստակամ է նոր առաջարկություններ լսել, իսկ խելամիտ առաջարկները նաև իրագործել ի նպաստ

ներառական կրթության ամրացմանը և իրականացմանը: Ներառական կրթությունը ուղղված է կրթության որակի բարելավմանը: Համատեղ ուսուցման պահանջը մղում է նոր մեթոդների որոնման, որոնք կարող են համապատասխանել բոլոր երեխաների պահանջներին՝ անկախ տարիքից և առանձնահատկություններից և դրանցով պայմանավորված խնդիրներից :

Այն ուղղված է նաև երեխայի սոցիալականացմանը. Ներառական դպրոցներն ունակ են փոխելու հասարակության վերաբերմունքը սոցիալական անհավասարության և խտրականության հանդեպ, բոլոր երեխաներին միասին ուսուցանելու ճանապարհով նրանք կարող են ձևավորել արդար, խտրականությունից զերծ հասարակության ստեղծման հիմքերը:

Գլուխ 3

Ներառական կրթության մարտահրավերները դպրոցում

Ներառական կրթությունը չի կարելի դիտարկել որպես առանձին ոլորտ,այլ պետք է դիտարկել որպես դպրոցական համակարգի զարգացման սկզբունք: Դպրոցը պետք է կարողանա որակյալ կրթական ծառայություններ մատուցել բոլոր երեխաներին՝ անկախ նրանց անհատական կարողություններից: Բոլոր երեխաները պետք է հարգալից վերաբերմունքի արժանանան և ստանան հավասար հնարավորություններ՝ համատեղ սովորելու համար:

Ներառական կրթության բացթողումներից է.

- ✓ Ներառական կրթության գաղափարը դեռ լիովին չի ընդունվել Հայաստանի Հանրապետության դպրոցների և հասարակության կողմից:
- ✓ Դպրոցների շենքերի մատչելիությունը: Ներառական դպրոցները չունեն ներքին հարմարեցվածություն: Թեքահարթակներ պետք է լինեն շենքից դուրս և ներս, սակայն հիմնականում այն կարող ես տեսնել դպրոցի առաջին հարկում: Ոչինչ նախատեսված չէ այն երեխայի համար, որն ունի հենաշարժողական խնդիրներ ու իր դասասենյակը գտնվում է 3-րդ հարկում: Որոշ երեխաներ հրաժարվում են դպրոց հաճախել հենց նման խնդիրների պատճառով: Այսօր ներառական դպրոցներ հաճախում են հիմնականում թեթև և միջին խնդիրներ ունեցող երեխաները:

- ✓ Ներառական դպրոցներում սանհանգույցները հարմարեցված չեն: Հիմնականում տիպային դպրոցական սանհանգույցներ են, որոնցից շատերն էլ անմխիթար վիճակում են:
- ✓ Ներառական դպրոցները չունեն հարմարեցված սպորտդահլիճներ և մասնագետ ուսուցիչներ, ովքեր կաշխատեն ֆիզիկական խնդիրներ ունեցող երեխաների հետ:
- ✓ Ներառական դպրոցներում կա մասնագիտական ռեսուրսների պակաս: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ պետք է աշխատի տարբեր մասնագետներից բաղկացած թիմ, որը պետք է բխի երեխայի շահերից, աշխատի մեկ ընդհանուր գաղափարի շուրջ
- ✓ Դպրոցները կրթական գործընթացում ծնողներին հազվադեպ են ընդգրկում իրենց գործունեության մեջ՝ թերագնահատելով նրանց ներուժը: Ծնողները երբեմն հրաժարվում են դպրոցական կյանքին մասնակից լինելուց ։Մեր կարծիքով դպրոց-ծնող կապը առավել ամուր հիմքերի վրա դնելու միջոցներից մեկը, հաճախակի հանդիպումներն են ծնողների հետ: Ընդունված ձևից տարբերվող ծնողական ժողովների կազմակերպումն է, ինչը իրենից ենթադրում է ծնողական ժողովի միջոցով նրանց հաղորդակից դարձնել դպրոցական կյանքին: Կարելի է նաև ծողների անմիջական մասնակցությամբ տարբեր ձևաչափերով դասեր կազմակերպել: Ծնողների հաղորդած տեղեկությունը աշակերտների մասին, կարող է ուղղորդել ուսուցչին, առավել արդյունավետ կազմակերպել որոշ երեխաների ուսուցումը: Դպրոցի հետ հաճախակի շփումը ծնողներին կարող է մոտիվացնել
- ✓ Ծնողների լիարժեք ներգրավածությունը դպրոցական կյանքին պետք է ապահովված լինի այնպես, որ խոչընդոտ չհանդիսանա յուրաքանչյուր երեխայի դպրոցում սովորելուն:
- ✓ Ճկուն ուսումնական ծրագրերի թերի լինելը. յուրաքանչյուր երեխա պետք է ստանա իր կարիքներին և կարողություններին համապատասխան կրթություն:

Ներառական կրթության իրագործմանն ուղղված բոլոր ջանքերը հենվում են իրավահավասարության գաղափարի վրա. եթե մենք դա անում ենք ելնելով խղճահարությունից կամ բարեգործական մղումներից, երբեք չենք կարող անհրաժեշտ արդյունքի հասնել:

Ներառական կրթությունը ենթադրում է, որ աշակերտներն իրենց ողջ բազմազանությամբ ու յուրատեսակությամբ սովորում են կողք կողքի, նույն դպրոցում և դասարանում: Ներառական կրթությունը շատ բարձր է գնահատում ուսումնական գործընթացում յուրաքանչյուր

աշակերտի ներդրումը: Ներառման սահմանումը ժամանակի ընթացքում փոփոխվել է, ինչի պատճառով ավելի է մեծացել պատշաճ ներդրումների, ռազմավարությունների և չափորոշիչների մշակման պահանջը: Առկա են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների սոցիալական և կրթական հմտությունների զարգացման բազմաթիվ խնդրահարույց հարցեր ու մարտահրավերներ, այդ թվում՝ ուսուցիչների կրթությունը և վերապատրաստումները, դպրոցների սոցիալական ու ֆիզիկական միջավայրի հարմարեցումները, ինչպես նաև ծնողների ակնկալիքները, մոտեցումները և պատկերացումները, երթուղայինների հարցը գյուղական համայնքում, ի տարբերություն քաղաքի: Բարեբախտաբար քաղաքային նոր երթուղիները հարմարեցված են հաշմանդամություն ունեցող անձանց

2023 թ-ից սկսած տեղական և միջազգային բազմաթիվ կազմակերպություններ նախաձեռնել են նոր ընդունված համակարգին համահունչ զանազան ծրագրեր՝ ուսուցիչներին և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին օժանդակելու համար: Այդ ջանքերի շնորհիվ այսօր շատ դպրոցներ ապահովում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսումնառությունը,սակայն ուսուցիչներից քչերն են մասնակցել այնպիսի վերապատրաստման կամ կրթական ծրագրերի, որոնք թույլ կտան հանրակրթական դասարաններում իրականացնելու այդ երեխաների կրթական կարիքներին համապատասխան ռազմավարություններ և ծառայություններ: Հայաստանում այսօր չկա ուսուցիչների՝ ներառական դասարանում երեխաների բազմազանության հետ աշխատելու նախապատրաստմանը միտված համակարգային մոտեցում կամ հատուկ ծրագիր:

Ներառական կրթության իրականացումը պահանջում է զգալի փոփոխություններ: Ներառական կրթություն իրականացնելիս կարևորվում է այն փաստը, որ աշակերտները լինեն հանդուրժող և տարբերություն չդնեն խնդիրներ ունեցող աշակերտների միջև: Դպրոցում պետք է առկա լինեն ԿԱՊԿՈՒ անձանց ուսումնառության համար անհրաժեշտ պայմաններ: Կարևորվում է բազմամասնագիտական խմբի առկայությունը: Սակայն այս խմբի անդամներից ցավոք դպրոցում միայն հոգեբանն է ներկա: Ներառական կրթությունը լավագույն լուծումներն է առաջարկում հանրակրթական համակարգին և կարող է ապահովել, որ բավարարվեն բոլոր սովորողների կրթական կարիքները: Միևնույն ժամանակ, ներառական կրթությունը չի կարող զարգանալ հանրակրթության համակարգից դուրս, առանձին: Այն չի կարող դիտարկվել որպես առանձին, առանձնահատուկ հարց կամ ոլորտ, այլ պետք է դիտարկվի որպես ամբողջ դպրոցական համակարգի զարգացման սկզբունք:

Որոշիչ է այն հարցը, թե ինչպես է առանձին վերցրած աշակերտի համար ապահովվում, որ նա ստանա իր կարողություններին և կարիքներին համապատասխան որակյալ կրթություն։ Եթե համակողմանի դիտարկենք աշակերտին, ապա դասարանական աշխատանքների պլանավորման ժամանակ վճռորոշ գործոն է համարվում դասարանում աշակերտի լիարժեք մասնակցությունն ապահովելու համար հնարավորությունների ստեղծումը։

Բոլոր խնդիրներն իրենց հանգուցալուծումները պետք է ստանան դպրոցի ներսում։ Կազմակերպվածությունն ու ռեսուրսների հստակեցումը պետք է բավարար չափով ճկուն լինեն, որպեսզի հնարավոր լինի անհրաժեշտ աջակցությունը տրամադրել անմիջապես դասարանում։ Կրթության հետ կապված խնդիրները, որ աշակերտները կարող են ունենալ, պետք է շարունակաբար քննարկվեն դպրոցի մանկավարժների և հատուկ մանկավարժական աջակցության թիմի անդամների հետ համատեղ։ Դրա նպատակն է հնարավորինս վաղ կանխել հնարավոր խնդիրները՝ արագ առաջարկելով հնարավոր լուծումներ։

Հայաստանի Հանրապետությունում ներառական կրթության զարգացման արդյունետությունը, ըստ <<Կրթություն Բոլորի համար>> ծրագրի ի սկզբանե իր զարգացման ընթացքում ուներ բացթողումներ և շտապողականություն, քանի որ առաջին իսկ օրվանից այն դժգոհությունների և խուճապի պատճառ հանդիսացավ։ Սակայն, այսօր արդեն, մի քանի տարի անց, ներառական կրթությունն ունի մասսայականություն և հանդիսանում է հասարակության հումանիզմի լավագույն դաստիարակության մեթոդ։ Սակայն, այդուհանդերձ, ներառական կրթությունը ամբողջ աշխարհում դեռ ունի անցնելու զարգացման երկարատև ճանապարհ, և մեր երկրում այն բավականին բարդ ու դժվար է ընթանում, քանզի ունի չմշակված և չհարմարեցված մեթոդաբանություն, գնահատման համակարգ, թերի պատրաստված մասնագետներ և մասնագիտական որակը չկարևորող տնօրեններ։ Ըստ մասնագետների կարծիքի, ներառական կրթության զարգացման արդյունավետությունը կարելի է կապել ոլորտում աշխատող յուրաքանչյուր մարդու բարեխիղճ մոտեցման և գրագետ լուծումների հայթայթման հետ։

1. Ներառական կրթության բացթողումներից է նաև մարզերի մեծամասնությունում համապատասխան կենտրոնների սակավությունը կամ ամբողջական բացակայությունը։ Կենտրոնների գործելու դեպքում էլ նկատվում է նեղ մասնագետների պակաս։ Հարմարեցված տրանսպորտը իսպառ բացակայում է և հենաշարժողական համակարգի խնդիրների առկայության դեպքում հասարակական տրանսպորտով տեղափոխվելը դառնում է անհնար։ Գյուղերի բնակիչները

տրանսպորտային խնդրի պատճառով չեն կարողանում հաճախել նախակրթարաններ և կենտրոններ: Հաճախ մի քանի տրանսպորտ փոխելու անհարմարությունից խուսափելու համար ծնողն ընտրում է տնային ուսուցման տարբերակը:

2. Մարզերում գործող մեկ կամ երկու մանկավարժահոգեբանական աջակցության կենտոնները չեն կարող բավարարել տվյալ մարզում աջակցության կարիք ունեցող սովորողներին: Մեկ կենտրոնը մարզի համար բավարար չէ, տարածքային առումով կտրտվածությունը մեծ է, քանի որ միջհամյանքային տրանսպորտը կաթվածահար վիճակում է:
3. Ներառական կրթություն իրականացնող նախադպրոցական ուսումնական հաստատությունները պետք է պատրաստ լինեն ապահովել այնպիսի պայմաններ, որոնք թույլ կտան երեխային մասնակցել ցանկացած գործունեության, համագործակցել, ուսումնասիրել, խաղալ և սովորել իր հասակակիցների հետ:

Մանկուց ներառումը շատ կարևոր է, իհարկե, որքան վաղ հասակից երեխան ներառվի հասարակությանը այնքան ավելի դյուրին կլինի ընկերների հետ շփումը նաև հետագա տարիներին, և այս ոլորտում հասարակության առաջ դրված ներկայիս խնդիրներն ավելի քիչ կլինեն:

Ներառական կրթությունը առավել արդյունավետ դարձնելու ուղղությամբ անհրաժեշտ է շտկել և լրացնել բացթողումները: Դրա համար առաջարկում ենք.

- Հաճախ կազմակերպել վերապատրաստումներ, ուսուցիչներին զինել նորանոր գիտելիքներով ու հմտություններով
- Հանրակրթական դպրոցները տեխնիկապես համապատասխանեցնել հաշմանդամ երեխաների կարիքներին,
- Դպրոցներում ստեղծել ներառական կրթության իրագործման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազա՝ համապատասխան սարքավորումներով, գույքով և գրականությամբ
- Հարմարեցնել դպրոցի միջավայրը հաշմանդամ երեխաների կարիքներին ·
- ՁԼՄ-ների միջոցով գրագետ և հաճախակի լուսաբանումները
- Դպրոցներում ողջ անձնակազմի խորքային վերապատրաստումները,
- Հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների վերապատրաստումները և խորհրդատվությունը,

- Համապատասխան մասնագետների ընդգրկումը ներառական կրթություն իրականցնող դպրոցներում,
- Դասարաններում աշակերտների քանակի նվազեցումը
- Գյուղական համայնքում ևս կարգավորել երթուղայինների հարցը՝ դրանք հարմարեցնելով հենաշարժողական համակարգով մարդկանց կարիքներին

Եզրակացություն

Ամփոփելով մեր կատարած հետազոտական աշխատանքը՝ կարող ենք ասել, որ բոլոր հանրակրթական դպրոցները պետք է պատրաստ լինեն իրականացնելու ներառական կրթություն: Կարևորում ենք, որ ստացված ներառականության հիմքերը պետք է դրվեն ընտանիքներում, շարունակվեն նախակրթարանում ու զարգանան դպրոցում և բոլոր այն կառույցներում, որոնք որևէ կապ ունեն ոլորտի հետ: Ներառական կրթությունը, ապահովելով բազմազանություն, յուրաքանչյուր սովորողին հնարավորություն է տալիս կրթություն ստանալ իր համայնքում՝ չմեկուսանալով ընտանիքից: Հարկավոր է օգնել ԿԱՊԿՈՒ երեխաներին համընդհանուրի մեջ ինքնաճանաչվելու ու ինքնագնահատվելու: Ենթադրվում է, որ փոխադարձ շփումը ավելի է հեշտացնում հասարակության մեջ ԿԱՊԿՈՒ երեխաների ադապտացիան: ԿԱՊԿՈՒ երեխաների ադապտացիայի կարևոր նախապայմաններից մեկը տարեկիցների հետ որոշակի փոխհարաբերությունների հաստատումը և «մանկական հասարակության» ստեղծումն է: Այլ մարդկանց նկատմամբ անձի սեփական ներքին դիրքորոշումը բնութագրվում է սեփական «ես»–ի և արարքների գիտակցվածության աճով, մեծերի կյանքի գործունեության և փոխհարաբերությունների նկատմամբ ցուցաբերվող հսկայական հետաքրքրությամբ:

Հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառումը հանրակրթական դպրոցներ կստիպի ուսուցիչներին մշակել նոր՝ դեպի երեխան կողմնորոշված ուսուցման և ուսումնառության մեթոդներ, ապահովել մեծ թվով մասնակիցների ընդգրկվածություն ուսումնական գործընթացում: Դրանից օգուտ կստանան բոլոր երեխաները:

Բոլոր երեխաները կրթության կազմակերպման այնպիսի ձևի կարիք են զգում, որը կօգնի նրանց հարաբերություններ հաստատել բոլորի հետ և նախապատրաստվել հասարակական կյանքին: Միայն ներառական մոտեցումը կարող է նվազեցնել վախը և նպաստել բարեկամության, հարգանքի ու փոխըմբռնման հաստատմանը: Կարևոր է հասկանալ, որ յուրաքանչյուր երեխայի զարգացման համար անհրաժեշտ է ստեղծել բարենպաստ պայմաններ՝ հաշվի առնելով նրա անհատական ընդունակությունները, կարողությունները և կրթական պահանջները :

Դպրոցի անձնակազմն պետք է իր աշխատանքում որդեգրի երեք առավելապես կարևոր հասկացություններ, որոնք պետք է վեր դասվեն ուսումնական ծրագրից: Դրանք

որակյալ կրթության իրական երեք ցուցանիշներն են՝ մասնակցություն, համագործակցություն և հավասարություն: Դրանք պետք է ուղղորդող սկզբունքներ լինեն կրթության պլանավորման և իրականացման բոլոր գործընթացներում: Երբ բոլոր սովորողների համար ապահովված է լիարժեք մասնակցության և համագործակցության միջավայր, և բոլորն ունեն զարգանալու հավասար հնարավորություններ, ապա կարելի է ասել, որ կրթությունը բարձր որակի է: Դպրոցում երեխաներին միմյանցից առանձնացնելու օրինական հիմքեր չկան: Երեխաները պետք է սովորեն միասին, դա օգտակար կլինի բոլորի համար: Պետք չէ նրանց պաշտպանել միմյանցից:

Ամեն ինչ կարելի է շտկել, եթե տարվի համատեղ, մեկ ընդհանուր գաղափարի շուրջ համախմբված աշխատանք: Արդյունավետ ներառական կրթություն իրականացնելու գործում մեծ նշանակություն ունեն թիմային աշխատանքի կազմակերպումն ու մանկավարժական անձնակազմի սերտ համագործակցությունը:

Գրականության ցանկ

1. Բաթոյան Զ. Ներառական հանդիումների կազմակերպման ուղեցույց: http://www.un.am/up/library/Inclusive_Meetings_Guidelines_Arm.pdf
2. Հարությունյան Մ. և ուր., Ներառական կրթության ռազմավարություն: Դասագիրք: .Մինեապոլիս, Մինեսոթա, ԱՄՆ. Մինեսոթայի համալսարան: ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևան, Հայաստան, 2020, Արմգովեդպեդփաբ, Երևան
3. «Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների նկարագիրը կրթության կազմակերպման գործընթացում մեթոդական ուղեցույց» - ձեռնարկ մանկավարժների համար
4. «Մատչելի կրթական միջավայր. ֆիզիկական միջավայրի հարմարեցումներ- մեթոդական ուղեցույց , Երևան 2023թ.
5. Ներառական կրթությունը գործնականում (ուսումնամեթոդական ձեռնարկ),Ս.Պետրոսյան, Երևան 2018
6. Ներառական կրթություն. Ուսումնամեթոդական ուղեցույց: Ձեռնարկ. – Երևան, 2018
7. Ներառական կրթության իրականացման ուղեցույց, Հանրակրթական հաստատությունների մանկավարժական աշխատողների համար, Երևան , 2008
8. Ներառող դասավանդում- մեթոդական ձեռնարկ մանկավարժների համար , Ա. Հ. Սվաջյան և ուրիշ.; Երևան 2023,
9. Ուղեցույց հաշմանդամություն ունեցող անձանց մասնագիտական կրթության և կողմնորոշման ծառայությունների. Գլխ.խմբագիր Սարատիկյան Լ., Երևան 2014, http://life-isability.am/Docs/Publications /Annex%205.%20PWD%20Proforientation_ Manual.pdfhttps://www.aravot.am/2015/11/16/629432/
10. https://www.formacionyestudios.com
11. https:org>cuales-son-las-ve…
12. dpir.am/hy/node/1710
13. https://hmk.am/wp-content/uploads/2021/03/dzernark-mankavarjneri-hamar.pdf
14. http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=94683
15. https://hmk.am/wpcontent/uploads/2020/10 _Karapetyan_L.pdf
16. https://hmk.am/wp-content/uploads/2021/04/Town-hall-_report-
17. https://progressgyumri.am/news/15479
18. https://www.unicef.org